**83. Գրի՛ր հինգ պարզ ընդարձակ նախադասություն, որոնցում բաղաձայնի գրության և արտասանության տարբերություն ունեցող ոչ մի բառ չլինի:**

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

**84. Արտագրի՛ր՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *o, ո, է, ե, ը* տառերը:**

Լուս....նկա երեկո է: Զեփյուռը օր....ր է ասում մեղմ....րեն խ....շշացող ծառերին: Լուսնի արծաթազ....ծ շողերի ներբո փռված է Սևանա լիճը, և մերթ....նդմերթ լսվում է խայտացող կոհակների ախորժալուր ճողփյունը: Երևում են Սևանի...կի լույսերը, որոնք հեռվից թրթռուն են թվում: Մեղմ....ր....ր բամուց սոսափող ծառի ներբո՝ գույն....զգույն ներկված նստարանին, նստած են երկու նախկին դաս....նկերներ' ...ականը և Վարդգ...սը: Նրանց արծակուրդները համ....նկել են, և նրանք, թողած հանապազ....րյա գործերը, եկել են հանգստյան տուն'փոթր-ինչ վայելե–լու հյուր....նկալ բնության հրաշալիքները: Վարդգ....սը հն....աբան է, իսկ ...ականը' գյուղատնտ...ա: Նրա աճեցրած բարձր....րակ խաղողի տե–սակները հայտնի են ամբողջ երկրում: Երկու ....նկերները մի ակ....նթարթ կտրվել են առօր....ական հոգսերից և ան....ացած դիտում են ակ....նա- պարար տեսարանը' կոր,...նթարդ լեռների ուրվագծերը, լուսինը մերթընդ–մերթ շղարշող ամպերը, արծաթափայլ լիճը: Քամու մի վայրկ....Նական սառը հպում սթափեցնում է նրանց, և վեր....սկսվում է ընդհատված զրույցը:

*Արփաշես Սարգսյան*

**85. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը և կետադրի՛ր: Դո՛ւրս գրիր առարկա ցույց տվող բառերը:**

Մոտկորը բնական թանգարան է՝ տարածված բաց երկնքի տակ: Նրա կենդանական աշխարհը կարկաչ…ն ա…բյուրները գրավում են քաղաքի ժխորով լցված փողոցների մրից ու փոշուց փա…չող մարդկանց: Մոտկորում կան հինավուր… հուշարձաններ գմբեթար… վանքեր ու գողտրիկ մատուռներ: Ավերակ վանքի մուտքի մոտ գեղեցիկ զար…անախշերով մի խաչքար կա կողքին մի որ…աքար մաշված գրերով: Մամ…կալած քարի վրա փոշու հաստ շերտի տակ դժվարությամբ կարդում ենք հնօրյա մակագրությունը փորագրված տասներորդ դարում: Տարիներ առաջ էր որ խա…տվեց անտառի անդորրը: Երկու հարյուր վա…սուներեք հեկտարի վրա սկսեցին նոր ծառեր տնկել:

---

---

---

---

**86. Տեքստից դո՛ւրս գրիր գոյականները, որոշել դրանց տեսակը, թիվը, հոլովումը, հոլովը, առումը:**

Աշխարհահռչակ նվաճողը՝ արյունռուշտ Լենկթեմուրը, բազմաբյուր հրոսակներով ներխուժել էր մեր հայրենիքը՝ Հայաստանի գավառները՝ ճգնելով տիրանալ Զանգեզուրի՝ յուրօրինակ դեմք ու դիմագիծ ունեցող լեռնաշխարհին: Նրա հարձակումները վաղօրոք իմանալու նպատակով Սյունյաց մեծատունները ծուլեցին վիթխարի մի զանգ՝ կախելով լեռան՝ երկրաշարժերից գոյացած քարակոփ բարձունքներից: Ամբարտավան, դժխեմ ոսոխի հարձակման ժամանակ շարժում էին զանգի պողպատե լեզվակը, և նրա ղողանջյունը սփռվում էր հայոց աշխարհում: Լեռներից հապշտապ իջնում էին հայոց կտրիճները, և ի դերև էին ելնում թշնամու հույսերը՝ խարդախ ու նենգամիտ:

---

---

---

---

---

---

**87. Անհրաժեշտ տեղերում գրի՛ր մեծատառով և դո՛ւրս գրիր բարդ ևածանցավոր գոյականները:**

Բուրգերից ու պարիսպներից վեր՝ մի կանաչազարդ բարձրավանդակի վրա՝ ծորի պռնկին, թառել էր անիի մեծատուններից մեկի՝ տիգրան հոնենցի՝ արվեստի հրաշալիքներով հայտնի եկեղեցին՝ դեպի երկինք ձգվող գմբեթով: Իսկ ներքևում՝ խոր ծորում, ախուրյանը, քերելով ուղղաձիգ ապառաժները, խլամրմունջ առաջ է ընթանում՝ ասես ողբալով քաղաքների թագուհու դժխեմ բախտը:

Քայլում ենք առաջ, և դատարկ քաղաքի խորախորհուրդ ամայության մեջ արձագանքում են մեր ոտնաձայները: Ահա և մայր տաճարը՝ անիի թագն ու պսակը՝ հիմնադրված սմբատ երկրորդ տիեզերակալի կողմից: Հայոց այս թագավորը ամենախրոխտ բագրատունիներից մեկն էր, որն իր տիրակալության տասներեք տարիների ընթացքում ավելի կառուցեց, քան պատերազմեց: Ցավոք, սմբատը չտեսավ իր երազած կառույցը՝ մայր տաճարը, որի շինարարությանը նրա մահից հետո ձեռնամուխ եղավ եղբոր՝ գագիկ շահնշահի կինը՝ կատրանիդե թագուհին՝ սյունյաց թագավոր վասակի դուստրը:

| **Բարդ** | **Ածանցավոր** |
|---|---|
| | |

**88. Բառաշարից դո՛ւրս գրիր գոյականները և մի քանիսով նախադասություննե՛ր կազմիր:**

Աշխարհիկ, ռուսական, արհամարհել, Մոցարտ, խորհուրդ, հեղհեղուկ, խորհել, շնորհալի, հայհոյել, Հովհաննես, խորին, նշխար, հայթայթել, օրհնյալ, ապաշխարել, շնորհակալություն, խոնարհ, հելլեն, ընդդիմակաց, տարընթաց, կեղծամ, երկկողմ, ուխտավոր, հովասուն, հովեկ, մրրկածեծ, ակաղձուն, իննամյա, հովվապետ, տանջալլուկ, աշխարհայացք, մանրավաճառ, օրհներգ, մոտեցնել, ակնակապիճ, աստղիկ, հատընտիր, արձակուրդ, ընդհանրապես, կասեցնել, կապտաթույր, ծաղկազարդ, սանրվածք, խոսեցնել, գծիկ, ժամացույց, անթիվ, անհարմար, այսօր, ճերմակ, հարավ, արևելյան, երկու, լինել, մենակ, դատարկ, ուսապարկ, կարմիր, կաթողիկոս, հյուսն, պարեգոտ, ժամադրավայր:

---

---

---

---

---

---

---

---

---

---

**89. Դո՛ւրս գրիր այն բառերը, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են միասին: Առանձնացրո՛ւ գոյականները:**

Արև/առ, ուզած/չուզած, քաղ/ծառայություն, երես/սրբիչ, ի/սպառ, լայն/էկրան, մերձ/ի/մահ, միջին/հայերեն, ոլոր/մոլոր, լուս/աստղ, սուտ/մեռուկ, սև/անուն, ցախ/ավել, ութ/անկյուն, հրամ/կազմ, հարյուր/մեկ, ճեփ/ճերմակ, օր/ավուր, ներ/աշխարհ, ամեն/ինչ, յոթանասուն/մեկ, նեղ/սիրտ, ներ/դիր, հաց/թուխ, ծովից/ծով, ետ/մահու, նախ/քան, ճարտարապետ/շինարար, քաջ/առողջ, հյութ/քամիչ, խուռն/երամ, ութ/ոտնուկ, ունկն/դրել, երկաթ/ուղի, տնե/տուն, յուրաքանչյուր/ոք, ծնող/կոմիտե, կրակ/մարիչ, հետ/գրություն, ճառ/ասաց, սեղան/ընկեր, նախ/օրոք, ծայր/աստիճան, տեր/հայր, փայտ/փորիկ, ց/մահ, լայն/եզր, առ/երես, առաջն/առնել, սուր/անկյուն, երեք/դռնանի:

**90. Տեքստից դո՛ւրս գրիր գոյականները և դրանցից կազմի՛ր բարդ և ածանցավոր բառեր:**

Երբ փոթորիկ էր լինում և մրրիկ, նա տեսնում էր Լիլիթին իր մոտով շեշտակի անցնելիս, և երբ կայծակն էր ճեղքում երկինքը, Լիլիթի հրեղեն սերն էր այդ, որ ճեղքում էր Ադամի հոգին:

Երբ գոցում էր բիբերը, իր սրտի մեջ տեսնում էր Լիլիթի անհուն գեղեցիկ պատկերը, երբ նայում էր աստղերին, աստղերի մեջ տեսնում էր Լիլիթի աչքերը և անհուն արևի մեջ՝ ամբողջ Լիլիթին…

Եվ երբ ճիգ էր անում Լիլիթին մոռանալու, գրկում էր հավատարիմ Եվային, կրծքին սեղմում և համբուրում. նա այդ ժամանակ Լիլիթին էր սեղմած տեսնում իր կրծքին, Լիլիթին համբուրում, Լիլիթին զգում, միայն Լիլիթին…

Եվ ապրեց Ադամ՝ սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամ՝ հառաչելով ու երազելով միմիայն Լիլիթին:

**91. Արտագրի՛ր և ըստ անհրաժեշտության բոլոր բառե՛րը սկսիր մեծատառերով.**

արաբական միացյալ ամիրայություններ, փոքր ասիա, դպրոցական բացատրական բառարան, արևելյան եփրատ, արևմտյան բեռլին, բարձր հայք, գետի ափ, կենտրոնական աֆրիկա, հարավային ամերիկա, աֆղանստանի իսլամական պետություն, եղիշե աբգարի սողոմոնյան, աշոտ երկաթ, արա գեղեցիկ, սահակ պարթև,երևանի բուսաբանական այգի, խոսե ռաուլ կապաբլանկա, ջորջ նոել գորդոն բայրոն, նար-դոս, սայաթ-նով, հայաստանի հանրապետություն, տիգրան մեծ, անանիա շիրակացի, սողոմոն իմաստուն, հայկ նահա-պետ, երկաթգծի կայարանամերձ այգի, հանգստյան գոտի, բելառուսի հանրապետություն, մեծ ասիս, նոր արեշ, օրվա լրահոս, առյուծաձև միհեր, գայլ վահանի ժամանակաշրջան, վախորդ փանոսի սայլը, ներքին թալին, վերին արտաշատ, ձենով օհան, ամերիկայի միացյալ նահանգներ:

**92. Տրված բառերով շարադրություն գրի՛ր՝ «Ամառային մի պայծառ օր» վերնագրելով:**

Սերգեյ, միջօրե, հայելազարդ, ծով, ափամերձ, կապտաթույր, աշխույժ, շառաչ, վաղնջական, Նաիրի, երկրպագու, լռելյան, միայնակ, վայելչակազմ, բարձրաբերձ, ռոպեական, քմահաճ, քնքուշ, Ադրինե, սանրվածք, հեզանազ, ծաղկազարդ:

**93. Արտագրի՛ր՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:**

Փարիզի նշանավոր կոթողներից է երկնամու.... էյֆելյան աշտարակը, որը դարձել է Ֆրանս....այի յուր....րինակ խոր....րդանիշներից մեկը: Այս աշտարակը կառուցվել է Գուստավ էյֆելի նախագծով: Աշխար....ահռչակ էյֆելի նախագծերով կառուցվել են բազմաթիվ շինություններ, որոնցից առավել ուշագրավ է Նյու-Յորքի «Ազատություն» ար....անի մետաղյա կմա....քը:

Աշտարակի կառուցումը կատարվել է ա....շեցուցիչ ճշգրտությամբ, այն տևել է երկու տարի, երկու ամիս, երկու օր: Հրապարակային բացումը կատարվել է հազար ութ հար....ր ութ–սունի... թվականին՝ մայիսի տասնիինգին: Կա–ռուցման ամբող.... ծախսը կազմել է յոթուկես միլ....ոն ֆրանկ, իսկ աշտարակի կշիռը յոթ հա–զար հինգ հար....ր տո....ա է: Այնպես որ կարող ենք ասել, թե աշտարակի ամեն մի կիլոգրամն արժեցել է ընդ....ամենը մեկ ֆրանկ:

Կառույցի բար...րությունը երեք հարյուր մետր է: Իհարկե, ժամանակին նման բար....րությունը ռեկորդային էր. իսկ այս....ր այն չի զարմացնում, բայց աշտարակն իր գրավչության շնոր....իվ մնում է զբ....սաշրջիկների նախ....նտրած վայրը, և տարեկան այդտեղ մի քանի միլ....ոն մարդ է այցելում: Շինարարական տեխնիկայի վեր....լքը ստեղծեց շատ կառույցներ, բայց Էյֆելյան աշտարակի հիմքը հարատևում է իր խոր....րդավոր ձ....ողական ուժով:

*Ըստ Կամսար Ավետիսյանի*

**94. Կազմի՛ր երեքական բառ *-ակ, -ային, -մունք, -եղեն, -բար* ածանցներով: Դրանցից գործածի՛ր նախադասությունների մեջ:**

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

**95. Դո՛ւրս գրի՛ր ածանցավոր բառերը (բացի բայերից) և առանձնացրո՛ւ ածանցները: Որոշի՛ր, թե ածանցավոր բառերն ինչ խոսքի մասի են պատկանում:**

Զանգվի ձորում՝ Կոնդի դեմ դիմաց՝ գետի աջ ափին, հսկա ուղտի պես չոքած բլուրը կոչվում է Ծիծեռնակաբերդ: Այստեղ նպատակային պեղումներ դեռ չեն կատարվել, բայց դեպի խորաձորը նայող մասում մինչև վերջերս էլ երևում էին կիկլոպյան հսկա քարերով կառուցված բերդի պարիսպների մնացորդները: Այստեղ նոր կառույցների շինարարության ժամանակ հայտնաբերվել են խեցեղեն ամաններ, նետի սլաքներ: ենթադրում են, թե ժամանակին Ծիծեռնակաբերդը գոյություն է ունեցել որպես պաշտպանական կառույց, բանի որ ամուր դիրք ունի, իսկ արևելյան մասում Զանգվի խոր ձորն է՝ թեք լանջերով ու

դժվարամատույց: Պատմաբանների կարծիքով Ծիծեռնակաբերդը ամրոց-բնակավայր է եղել և գոյություն է ունեցել երկար տարիներ: Շատ լեգենդներ են կապված այս բլրի հետ:

«Լումա» ամսագրում 1906 թ. բժիշկ Լևոն Տիգրանյանը տպագրել է ժամանակին լսած մի ավանդություն: Բլրի վրա դարեր առաջ մի հզոր բերդ է եղել, որը սիրո դիցուհու՝ Աստղիկի անունով կոչվել է Աստղկաբերդ: Ավանդությունը պատմում է նաև, որ բերդը ունեցել է մի բարձր աշտարակ, որտեղ բույն էին դրել ծիծեռնակները՝ դիցուհու սուրհանդակները: ԵՎ այդ իսկ պատճառով հին անունը մոռացվել է և դարձել Ծիծեռնակաբերդ: Մի ուրիշ ավանդություն վկայում է, որ բերդում շրջապատված Սմբատ իշխանը, երբ տեսնում է, որ թշնամուն այլևս դիմադրել չի կարող, աստծուն խնդրում է ներսում պատսպարված ժողովրդին ծիծեռնակ դարձնել: Աստված կատարում է նրա խնդրանքը: Մարդիկ ծիծեռնակներ են դառնում և ազատվում: Ինքը՝ Սմբատ իշխանը, նստում է իր ձին ու թափով թռչում դեպի հանդիպակաց ափը: Ձիու սմբակը խփվում է մի ժայռակտորի: Մինչև օրս էլ Հրազդանի ձախ ափին փռված այգիներում մնում է այդ ժայռակտորը՝ վրան սմբակի հետքը:

*Ըստ Էդուարդ Ավագյանի*

**96. Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական նախածանց և արմատ՝ կազմի՛ր վեց նախածանցավոր բառ:**

| | |
|---|---|
| դժ | աղեղնաձև |
| տ | լուսամփոփ |
| արտ(ա) | շրջադարձ |
| նախ(ա) | բախտախնդիր |
| ներ | ճաշկերույթ |
| անդր(ա) | սահմանակից |

**97. Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական արմատ և վերջածանց՝ կազմի՛ր վեց վերջածանցավոր բառ:**

| | |
|---|---|
| քաղաքամայր | որդ |
| ուղեկից | արան |
| սիգաճեմ | ոն |
| հոգեհմա | եղեն |
| բարեգործ | ային |
| ոսկեպատ | իչ |

**98. Գտի՛ր, թե յուրաքանչյուր շարքի որ բառում կա տողասկզբում նշված նախածանցը և ընդծի՛ր:**

1. ան- - անազ, անագորույն, անձավ, անմիտ
2. ան- - անկյուն, անգղ, անհաշտ, անձնական
3. ան- - անձրև., անձև., անուն, անուրջ
4. ան- - անջատ, անոթ, անոդ, անօդ
5. ապ- - ապականել, ապակի, ապահով, ապաբախտ
6. ապ- - ապառաժ, ապաստան, ապարանջան, ապերջանիկ
7. ապ- - ապուխտ, ապարդյուն, ապուր, ապստամբ
8. դժ- - դժվար, դժխեմ, դժգոհ, դժոխք
9. տ- - տոմար, տամուկ, տկար, տրտում
10. չ- - չքնաղ, չմուշկ, չամիչ, չկամ

**99. Յուրաքանչյուր տողում եղած բառերից ընտրված համապատասխան արմատով և տողասկզբի ածանցով կազմի՛ր մեկական բառ (առանց երկրորդ ածանցի):**

1. *-ային* - ազնվացեղ, թաղար, առաջնորդ, աղբյուր
2. *-ակի* - բեռնակիր, ինքնաեռ, խճուղի, մասնաբաժին
3. *-գին* - քաղաքագլուխ, անալի, ջերմաչափ, թանկարժեք
4. *-ուն* - քարաղ, թթվասեր, ինքնաթիռ, շրջայց
5. *-ացի* - չնչին, տեղաբնակ, իրավագետ, վարսավիր
6. *-ակ* - հնակարկատ, հնադար, ջրհորդան, մեղրածոր
7. *-ական* - իրավաբանություն, անգոյություն, խճուղի, տարորոշել
8. *-ություն* - անհոգի, անկայուն, հասուն, լիաբերան
9. *-իչ* - մասուր, ինքնուսույց, մարզպան, գրախանութ
10. *-ուկ* - բամբակե, ճնճղապաշար, անգիր, գոմեշ

**100. Գտի՛ր, թե յուրաքանչյոր շարքի որ բառում կա տողասկզբում նշված վերջածանցը:**

1. *-յակ* - կղզյակ, որդյակ, պատանյակ, շաբաթօրյակ
2. *-ան* - դաժան, սեղան, շարան, գերան
3. *-գին* - թանկագին, փրկագին, սակագին, ջերմագին
4. *-ուն* - ազգանուն, ծորուն, գարուն, դեղատուն
5. *-գույն* - դարչնագույն, վարդագույն, ոսկեգույն, հնագույն
6. *-ակ* - դանակ, դիտակ, նամակ, հասարակ
7. *-ոն* - մրահոն, կանոն, կիտրոն, ջարդոն
8. *-ուտ* - ճահճուտ, կարկուտ, արծվաճուտ, իրիկնամուտ
9. *-ատ* - գթառատ, գորգապատ, վաստակաշատ, գունատ
10. *-ուկ* - դաշտամուկ, գաղտնածածուկ, շուտասելուկ, սնդուկ

**101. Յուրաքանչյուր շարքում գտի՛ր այն բառը, որը կազմված է միայն երկու արմատից:**

1. լեռնաշխարհ, առողջարան, մայրաքաղաքային, գրապահարան
2. ազդօրինակ, վիպասան, տանուտեր, տանտեր
3. գազայրիչ, թիկնաթոռ, խճանկար, շաբաթօրյակ
4. միջնաբերդ, խնդրագիրք, ջրհոր, խաչմերուկ
5. սփյուռքահայ, վերավաճառք, լուսամփոփ, ծովեզրյա
6. այլմոլորակային, համազգային, ժամանակացույց, շաքարավազ
7. բերքառատ, փորձանոթ, անհեռատես, ծխածածկույթ
8. նույնանուն, հոմանիշ, հականիշ, համանուն
9. ճարտասան, բազմազգ, ասֆալտապատում, լեռնադահուկորդ
10. երգչախումբ, լուսանկարիչ, ակնթարթ, բյուրեղապակյա

**102. Յուրաքանչյուր շարքում գտի՛ր այն բառը, որում հոդակապ չկա:**

1. արագավազ, գրասեղան, ծաղկաման, պատվասեր
2. լայնարձակ, ցլամարտ, ձյունապատ, սրտամոտ
3. փոշեհատիկ, տարեդարձ, պարեղանակ, գինետուն

4. հողածին, բեռնատար, սրճաղաց, ինքնաթիռ
5. քչախոս, ելակետ, սալաքար, հորդառատ
6. աշխատավարձ, արձակագիր, մեծարժեք, տպագիր
7. գծագիր, լուսամուտ, գրատախտակ, ազգատյաց
8. վազանց, մշտադալար, Երանգապնակ, սակագին
9. մեծամիտ, եզրագիծ, գովազդ, տնամերձ
10. սրտամոտ, եռակողմ, եսասեր, բազմազգ

**103. Գրի՛ր տասը բառ, որոնցում հոդակապը հնչյունափոխված լինի:**

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

**104. Յուրաքանչյուր շարքում գտի՛ր այն բառը, որի առաջին արմատը հնչյունափոխփած է:**

1. խացաբույս, ջրամբար, խոզապուխտ, գահընկեց
2. լուսամուտ, կարճմիտ, շաքարեղեգ, ծառուղի
3. մայրուղի, հացթյտոսն, հորդաբուխ, խճանկար
4. ժամանց, հարցասեր, ծանրամարտ, ծովախորշ
5. քաղցրանուշ, լողազգեստ, գրատուն, մայրաքաղաք
6. սարահարթ, գունանյութ, երկաթուղի, նկարակալ
7. ծովափ, նավավար, փորձագետ, սրտացավ
8. անցագիր, ծաղկաշղթա, մարդասեր, տերևաթափ
9. հուզառատ, լիառատ, հորդաբուխ, մեծամիտ
10. բոցագույն, մարմնագույն սպիտակագույն, հողագույն

**105. Գտի՛ր, թե տրված կրկնավորների որ բաղադրիչն է հնչունափոխված:**

Մանր-մունր, բարակ-մարակ, պարապ-սարապ, աման-չաման, սուտ-մուտ, բիչ-միչ, թելիկ-մելիկ, փոքր-մոքր, ավալ-թավալ, ակաս-պակաս:

**106. Նախորդ վարժության կրկնավորնե՛րը գործածիր նախադասություններում:**

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

**107. Առանձին սյունակներով դո՛ւրս գրիր անվանական և բայական հարադրությունները:**

Մեքենան կանգ առավ աղբյուր-հուշարձանի մոտ: Ուղևորները իջան մեքենայից՝ փոթր-ինչ շունչ քաշելու և նախաճաշելու: Հուշաքարի վերևում քանդակված էին նետ-աղեղով, զենք-զրահով մարդիկ, իսկ ներքևում մետաղյա փայլուն խողովակն էր, որից ջուրը բչբչոցով լցվում էր քարե թասի մեջ: Քիչ հեռու՝ ծառերի մոտ, երկաթե սեղան-նստարան կար: Ուղևորները բաց արին իրենց ուղեբեռը, հանեցին հաց-պանիր, բանջարեղեն և նստելով ծառերի տակ՝ սկսեցին նախաճաշել ու դիտել շուրջբոլորը: Հեռվում անքիվ-անհամար բլուրներ էին, իսկ ավելի մոտ՝ այգիներ էին ու արտեր, որոնցում ութ-ինը մարդ էր աշխատում: Մոտակա ծառերի վրա կարմրին էին տալիս մրգերը: Շուտով մի բեռնատար կանգնեց արտերի մոտ, և մի մարդ, մեքենայից իջնելով, մոտեցավ աշխատողներին: Աղբյուրի մոտից չէին լսվում նրանց գոռում-գոչյունները, բայց ձեռքերի շարժումներից երևում էր. որ եկողը ցույց է տալիս հեռվում երևացող գյուղը ու ինչ-որ բան բացատրում, իսկ մյուսներն առարկում են: Վերջապես նրանք համաձայնեցին, ու բոլորը միասին բարձրացան բեռնատարի թափքը: Մեքենան ծուխ արձակելով շարժվեց: Աղբյուրի մոտ նախաճաշողներն էլ վեր կացան, հավաքեցին ուտելիքները և վայելելով սառնորակ ջուրը՝ ճանապարհ ընկան:

*Ըստ Արփաշես Սարգսյանի*

| Անվանական հարադրություններ | Բայական հարադրություններ |
|---|---|
| | |

**108. Տեքստից դո՛ւրս գրիր բարդ ևածանցավոր բառերը և դրանցով շարադրա՛նք կազմիր.**

Հանդարտահոս այդ գետի արևահայաց ափին վսեմորեն բազմած էր լեռնաշղթան՝ սուրսայր կատարներով: Այն ավելի էր վեհացնում հոգեզմայլ ալպյան մարգագետինների գեղեցկությունը՝ երփներանգ, փարթամ, զմրուխտաշող: Ականակիտ գետը, բարձրաբերձ, երկնահուպ լեռնաշղթան, թավշականաչ մարգագետինները լուռ վկաներն են իմ խենթ մանկության:

Ու հիմա, երբ կրկին կարոտակեզ այցի եմ եկել ոսկեթև մանկությանս նվիրական, սրբասուրբ վայրերին, պղտորված աչքերիս առաջ իմ մանկության սրտահույզ պատկերներն են, որ լռելյայն գալիս են՝ որպես վաղուց անդառնալիորեն փշրված, անէացած քաղցր երազի բեկորներ:

| Ածանցավոր բառեր | Բարդ բառեր |
|---|---|
| | |

**109. Լրացրո՛ւ բաց թողած տառերը: Տեքստից դո՛ւրս գրիր բարդ և ածանցավոր բառերը՝ դասդասելով երկսյուն (T-աձև) աղյուսակում:**

Հազարաթույր ծաղիկները պճնազար-ել էին բուրաստանները, երազանման թիթեռնե-րի բույլերը ճախրում էին փար-ամ ու զմրու-տաշող կանաչների մեջ՝ անսահման հաճույք պատճառելով դիտողին: Արմավենիները, թզենիները, պչրանքով բոլորել էին ականակի-լճակների շուրջը: Դրանցում ցոլացայտ ձկներ էին խայ-ում: Անուրջների պես հմայելով բուրումնավետ օդում՝ թռչկոտում էին դրա-տային հավքերը, և նրանց հո-եմա երգերի դայլայլները կախարդում էին ունկնդրին: Ծանրասաղար- ծառերից կախված էին պտուղները՝ թուզը, արմավը և սերկևիլը: Թվում էր՝ բնությունը ցանկանում է զարմացնել իր շռայլությամբ: Լեռները լռելյայն կախարդվել էին, մթ-կա ձորերը՝ պապանձվել:

| Բարդ բառեր | Ածանցավոր բառեր |
| --- | --- |
| | |

**110. Կազմի՛ր բարդ բառեր՝ առաջին բաղադրիչ դարձնելով տրված բառերը (նշել հնչյունափոխությունը և այդ բառերով նախադասություններ կազմել).**

այգի, ոսկի, որդի, գինի, տարի, ուղի, բարի, փոշի, գարի, մորթի, հոգի, խեցի:

**111. Հետևյալ բառակապակցություններով կազմի՛ր բարդ բառեր և ստացված բառե՛րը գործածիր շարադրության մեջ՝ դնելով վերնագիր:**

Կաշվով պատված, կյանքով խնդացող, սուր տեսողություն ունեցող, աշխարհով մեկ սփռված, մարդկանցից խուսափող, կծու համ ունեցող, բարիք շնորհող, վայրկյանի սլաք, ինքն իր կամքով, օրհնության երգ, սյուներով զարդարված, հազարավոր երանգներով, հնությունից մաշված, դառն ու աղի, երախտիքը մոռացող, երկնքի մեջ սուզված, վշտից բեկված, մեղք գործող, օրենքը զանց առնող, հրեղեն աչքեր ունեցող:

**112. Տրված գոյականների ու բայերի հարադրությա՛մբ կազմիր հարադիր բարդություններ.**

ա) գլուխ, միտք, ձեռք, երես, վիզ, խելք, պատի ծեփ, ոտք, քար, քիթ, հանգիստ, սիրտ, քամի, պար, լեզու, հետև, ջուր, բերան, տեղ, հանդես, ուսում, կտուր, խոսք:

բ) դառնալ, անել, տալ, գալ, ծռել, բերել, կախել, կանգնել, կտրել, մաշել, ածել, առնել, ընկնել, թեքել, գցել, ասել, գնալ, ծեծել, ստանալ, կտրել, բացել:

**113. Տրված բառազույգերով կազմի՛ր կցական բարդություններ՝ գործածելով կապ, շաղկապ և նախդիր.**

| | | |
|---|---|---|
| այր, ձի | չափ, կշիռ | հարց, փորձ |
| ել, մուտ | առ, տուր | սար, ձոր |
| տուն, տեղ | ել, էջ | ինքն, ինքյան |
| խոչ, ոտ(ք) | օր, բուն | պատ, պատ |
| տուն, տեր | մերթ, մերթ | տուն, տուն |
| վար, ցանք | փոխ, փոխ | օր, գիշեր |

**114. Տրված բառե՛րը ենթարկիր բառակազմական վերլուծության (ըստ աղուսակի).**

Անաշխատունակություն, անտարակուսելի, ազգակցական, մատենագիտական, հակագեղագիտական, ներդասակարգային, հակասահմանադրական, հրաձգարան, համաճարակաբանական, դասագրքային, անհեռատեսորեն, անբարեխղճություն, վարչատարածքային, բարձրագնացային, հակակարկտակայան, արյունարբու, անշնորհակալություն, մեծամասնական, գերագնահատելի, անանցաթուղթ, :անհաստատակամություն, հակադաշնակցական, անհամաձայնագիր, համագործակցային, ատամնաբուժություն, միամտաբար, գազանազսպական:

| Նախածանց | Արմատ | Հոդակապ | Երկրորդ արմատ | Վերջածանց (ներ) |
|---|---|---|---|---|
| | | | | |

**115. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը և կետադրի՛ր: Դո՛ւրս գրիր առարկա ցույց տվող բառերը և դրանցով կազմի՛ր բարդ նախադասություններ:**

Մոտկորը բնական թանգարան է՝ տարածված բաց երկնքի տակ: Նրա կենդանական աշխարհը կարկաչ…ն ա…բյուրները գրավում են քաղաքի ժխորով լցված փողոցների մրից ու փոշուց փա…չող մարդկանց: Մոտկորում կան հինավուր… հուշարձաններ գմբեթար… վանքեր ու գողտրիկ մատուռներ: Ավերակ վանքի մուտքի մոտ գեղեցիկ զար…անախշերով մի խաչքար կա կողքին մի որ…աքար մաշված գրերով: Մամ…կալած քարի վրա փոշու հաստ շերտի տակ դժվարությամբ կարդում ենք հնօրյա նամակգրությունը փորագրված տասներորդ դարում: Տարիներ առաջ էր որ խա…տվեց անտառի անդորրը: Երկու հարյուր վա…սուներեք հեկտարի վրա սկսեցին նոր ծառեր տնկել:

**116. Խմբավորի՛ր հատուկ և հասարակ գոյականները. դրանցից մի քանիսն գործածի՛ր պարզ ընդարձակ նապադասությունների մեջ:**

Հայաստան, երկիր, մարդ, կենդանի, արծաթ, Սևան, Հասմիկ, սյուն, աման, տնօրեն, Հոմերոս, արտ, Արցախ, լեռ, Առնոս, քար, Մուշ, դաշտ, Երվանդ, դեզ, Մեծ Հայք, Գեղեցիկ, մշուշ, Քարածի, դպրոց, Արգիճի, աշակերտ, որմնադիր, իշխան, Արծրունի, նախագահ,

աղավնի, գավաթ, Գառնի, Գոհար, որսորդ, Լոռի, անտառ, Մեղրի, մետաղ, հույն, Վարդուհի, Վաղարշապատ:

| Հատուկ | Հասարակ |
| --- | --- |
| | |

**117. Արտագրի՛ր և անհրաժեշտ տեղերում գրի՛ր մեծատառով և այդ բառե՛րը գործածիր նախադասությունների մեջ:**

Բուրգերից ու պարիսպներից վեր՝ մի կանաչազարդ բարձրավանդակի վրա՝ ձորի պռնկին, թառել էր անիի մեծատուններից մեկի՝ տիգրան հոնենցի՝ արվեստի հրաշալիքներով հայտնի եկեղեցին՝ դեպի երկինք ձգվող գմբեթով: Իսկ ներքևում՝ խոր ձորում, ախուրյանը, քերելով ուղղաձիգ ապառաժները, խլամրմունջ առաջ է ընթանում՝ ասես ողբալով քաղաքների թագուհու դժխեմ բախտը:

Քայլում ենք առաջ, և դատարկ քաղաքի խորախորհուրդ ամայության մեջ արձագանքում են մեր ոտնաձայները: Ահա և մայր տաճարը՝ անիի թագն ու պսակը՝ հիմնադրված

սմբատ երկրորդ տիեզերակալի կողմից: Հայոց այս թագավորը ամենախրոխտ բագրատունիներից մեկն էր, որն իր տիրակալության տասներեք տարիների ընթացքում ավելի կառուցեց, քան պատերազմեց: Ցավոք, սմբատը չտեսավ իր երազած կառույցը՝ մայր տաճարը, որի շինարարությանը նրա մահից հետո ձեռնամուխ եղավ եղբոր՝ գագիկ շահնշահի կինը՝ կատրանիդե թագուհին՝ սյունյաց թագավոր վասակի դուստրը:

**118. Դո՛ւրս գրիր բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով. դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:**

հայկական սփյուռք, նոբելյան մրցանակ, վայոց ձորի մարզ, դավիթ անհաղթ, խրիմյան հայրիկ, աշոտ երկաթ, երվանդ սակավակյաց, մինա բիբի, սահակ պարթև, վայոց ձոր, ռուսաստանի դաշնություն, ծաղկունյաց լեռնաշղթա, կարսի թագավորություն, լառ մարգար, նոր արեշ, տրդատ երրորդ, նոր նորք, սողոմոն իմաստուն, գրիգոր զոհրապ, մեծ հայք. հայաստանի հանրապետություն, երևանի պետական համալսարան, վայոց ձոր, սևանա լիճ:

## ԲԱԺԻՆ 3. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԲԱՌԻՄԱՍՏ

**1. Հայտորոշիչ թեստ**

**ա) Խմբավորի՛ր բառերը ըստ համապատասխան շերտերի:**

Տխուրաչյա, ըղձալի, բիլ, շուշանաթույր, հող, խանութ, ես, էսօր, վաղը, դրսում, դիմում, հավես, պոռշ, մարդ, պաղ, աղբյուր, քրոմոսում, տուն,, էնքան, էգուց, պուճուր, վիզ, նյութեղեն, օջախ, լազուր, գունանկար, հողածին, էսքան, ալարել, ման գալ, գորովագութ, իրիկուն, ախպեր, ուստա, ուրախ, մամիկ, հեզանազ, ունկ, պոռշ, գիրք, լաջվարդ, օդապարիկ, ատոմ, ֆունկցիա, բանաձև:

| **Հիմնական բառապաշար** | **Խոսակցական բառապաշար** | **Գրքային բառապաշար** |
|---|---|---|
| | | |

**բ) *Աչք* բազմիմաստ բառը տարբեր իմաստներո՛վ գործածիր նախադասություն-ներում:**

______________________________________________________________

**գ) Լրացրո՛ւ նախադասությունների բաց թողնված բազմիմաստ բառերը:**

ա) Չնայած որ Հայկը, անտարակույս, շատ______________ էր, սակայն նրան էլ __________ ծանոթ էր վախի զգացումը:

բ) Նա իր ___________էր համարում______________________ ժամանակին վերադարձնել: (*պարտք, բաց*)

**դ) Ընդգծի՛ր փոխաբերական իմաստով գործածված բայերը:**

Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա.-
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա: *Վ. Տերյան*

**2. Հայտորոշիչ թեստ**

**ա) Խմբավորի՛ր տրված բառերն ըստ համապատասխան բառաշերտերի շերտերի:**

Ծով, մետաֆիզիկա, գլոբուս, երիտասարդ, արևահամ, ջրահարս, քնքշաբույր, վիշապածայն, տխրահինչյուն, նվագավար, ջրցան, ունկ, աչքածակ, կենսաժպիտ, քաղցր, քաղաք, գեղեցիկ, սսկվել, քեֆ, մարմանդ, գեղարդ, սպիտակ, ոտքերն ընկնել, սիրտ, ոսկեհանդերձ, խելառ, փչան, կոտոշ, գզվռտոց, նվնվալ, երկրակեղև, պարեգոտ, վիզ, հոնք, լյարդ, ընկարգել, անոթ, գեղասահք, զարթոն:

| **Հիմնական բառապաշար** | **Խոսակցական բառապաշար** | **Գրքային բառապաշար** |
|---|---|---|
| | | |

**բ) Հետևել բազմիմաստ բառո՛վ կազմիր նախադասություններ:**

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

գ) **Լրացրո՛ւ նախադասությունների բաց թողնված բազմիմաստ բառերը:**

ա) Այդ համընդհանուր ____________ մեջ բկլիկ տղան անվրդով վայելում էր քաղցր ու թանձր ____________________________:

բ) Տիկնոջ _____________________հաճույքից փայլեց, երբ շոշափեց մետաքսե գործվածքի փայլուն _________________: (*երես, շփոթ*)

դ) **Ընդգծի՛ր փոխաբերական իմաստով գործածված բայերը:**

Երբ Հայաստան եմ ասում,
Քարն արթնանում է քնից,
Սիրտս թռնում է բնից,
Եվ կակաչները բլրից
Դեպի սարերն են վազում: *Հ. Սահյան*

**3. Տրված բառերը ուղիղ և փոխաբերական իմաստո՛վ գործածիր նախադասությունների մեջ:**

Կանաչ-կարմիրը կապել, սև օր, կարմիր արև, գորշ օր, կանաչ ճանապարհ, սպիտակ մահ, գլուխը կախ, թրի կտրած, քիթը ցցած:

**4. Արտագրի՛ր և փակագծերում տրվածներից ընտրի՛ր այն բառը, որը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:**

Բնակատեղին հետզհետե ընկղմվեց (սև, գիշերային, ամենակուլ) խավարի մեջ: Ջրի վրա ծիծեռնակի (կիսաքանդ, տխուր, թափուր) բույնն էր կախվել անպաշտպան: Երեկո էր, երբ իշխանը իր զորքերով մտավ այդ (անծանոթ, գեղատեսիլ, մութ) աշխարհը: (Տխուր, թխպոտ, ամպամած) երկնքից անձրևն էր մաղում շիկացած հողին: Ջրի ափին ինձ է նայում (ծաղկած, բուրավետ, հեզանազ) նռնենին: Անտրտունջ է (բարձր, դալար, գլխահակ) ուռին՝ կանգնած առվի եզրին: Մենք հանդիպեցինք ամառվա տապին, երբ իմ սրտին արդեն (հողմ, ցուրտ, վշտահար) էր պատել:

**5. Ընդգծի՛ր 10 բառակապակցություն, որոնց առաջին բառը տվյալ դեպքում փոխաբերական իմաստ ունի: Դրանք գործածի՛ր նախադասությունների մեջ:**

Սառը ջուր, բութ հայացք, սպիտակ թուղթխոր, փոս, ծով համբերություն, չար աչք, սուր խոսք, խաղաղ ծով, բախտի խաղ, բացօթյա սրճարան, ազնիվ աղջիկ, քար անտարբերություն, սև կակաչ, բաց պատուհան, միամիտ հայացք, խոր լռություն, սև սիրտ, վերջին կետ, ալեծուփ ծով, ծանր գրիք, տխուր մարդ, գողունի նայվածք:

**6. Սյունակներից ընտրի՛ր համապատասխան հոմանիշները և գրի՛ր դեմ դիմաց:**

| | | |
|---|---|---|
| դժվար | հարթ | ուղիղ |
| պերճ | արգավանդ | կողմնակալ |
| ողորկ | խրթին | խելացի |
| հուռթի | լրջմիտ | փառահեղ |
| աչառու | շքեղ | բերրի |
| խոհեմ | անարդար | բարդ |

7. **Գրի՛ր տրված բառերի այնպիսի հոմանիշներ, որոնք ունեն՝**

| **ա)** ***բ, պ կամ փ*** | **բ)** ***գ կամ ք*** | **գ)** ***դ, տ կամ թ*** | **դ)** ***ձ, ծ կամ ց*** |
|---|---|---|---|
| սողոսկել | գոլորշի | տերևաշատ | հնամենի |
| պատրանք | ջրել | կրկնօրինակել | հյուսն |
| շվայտ | վտարել | թմրել | տենդ |
| լացուկոծ | պաշտել | համեմատել | ուրախանալ |
| մաքրել | տաղանդ | անտուն | սով |

**8. Գրի՛ր տրված բառերի այնպիսի հոմանիշներ, որոնք ունեն՝**

| | | | |
|---|---|---|---|
| **ե)** ***ջ, ճ կամ չ*** | **զ)** ***ժ կամ շ*** | **է)** ***զ կամ ս*** | **ը)** ***ղ կամ խ*** |
| կույտ | ստույգ | պատառոտել | ամպոտ |
| ձեռնածու | ուժգին | կամաց-կամաց | անշնորհակալ |
| ապաշխարել | մեղեդի | խայտաբղետ | խեղաթյուրել |
| կրճատել | կռվել | այգեպան | ծաղրածու |

**9. Տրված շարքներում ընդգծի՛ր այն բառը, ո՞րը հոմանիշ չէ՝**

| | | |
|---|---|---|
| **ա)** ***թերություն*** **բառին** | **բ)** ***պարփադրել*** **բառին** | **գ)** ***մառախլապատ*** **բառին** |
| արատ | հարկադրել | թխպոտ |
| բաց | պարտավորեցնել | մթին |
| բացթողում | պատգամել | միգամած |

**10. Յուրաքանչյուր շարքից առանձնացրո՛ւ հոմանիշները, կազմի՛ր հոմանշային շարքեր և ընդգծի՛ր հիմնաբառերը.**

ա) փառաբանել, գովել, դրվատել, բարեխոսել, խրախուսել, ներբողել, փառակալել, գովերգել, գովազդել:

բ) լուռումունջ, անխոս,  անձայն,  մնջախաղ, լուռ, անդորրավետ, ձայնազուրկ, լռելյայն,

գ)  միշտ, անընդհատ, մշտադալար, անդադար, շարունակ, դեռ, երբեք, մշտական, մշտապես:

**11. Գրի՛ր տրված դարձվածքների հոմանիշները (մեկ բառով):**

ա) ձեռք քաշել, լեզու առնել, բերանը ջուր առնել, ծայր առնել, կրակի գին
բ) երկու խոսքով, մի շնչով, աչքը ծակ, մի գլուխ, թևաթափ լինել,
գ) պատի ծեփ դառնալ, մտքից հանել, քրտինք թափել, սիրտ առնել,
դ) վերջակետ դնել, գլուխ տալ, գլուխ գովել, բերան ծռել, դեմ դուրս գալ:

**12.** **Հոմանշային շարքերը համալրի՛ր մեկական դարձվածքով: Դարձվածքներն ընտրի՛ր տրվածներից.**

սիրտ տալ, թուք ու մուր տալ, խելքը կտրել, բուրդը քամուն տալ, ձեռք մեկնել, սիրտը փորն ընկնել, բերանը բաց մնալ:

ա) ոգևորել-քաջալերել, խրախուսել, խանդավառել, գոտեպնդել, սրտապնդել,
բ) ծեծել - գանակոծել, խարազանել, մտրակել, ձաղկել,
գ) խայտառակել - անարգել, անպատվել, անվանարկել,
դ) հիանալ - զմայլվել, սքանչանալ, ապշել, զարմանալ,
ե) օգնել - աջակցել, նպաստել, օժանդակել, սատարել,
զ) երկյուղել - վախենալ, սարսափել, սոսկալ, ահաբեկվել:

**13. Արտագրի՛ր, տրված հատվածի ընդգծված բառերի համար հոմանիշներն ընտրի՛ր բառախմբից և տեղադրի՛ր տեքստում:**

**Խոր** աշուն էր: Անդառը գունավորվելմ էր:

**Խելագար** քամին մտավ անտառ, **աստիճանաբար ուժգնացավ**, վերածվեց **փոթորկի**: Դարավոր կաղնին **ճռճվեց, դիմադրեց, ապստամբեց հողմի** դեմ: Սակայն ուժերը հատան, և անտառի արքան **ճռռոցով** սկսեց **տապալվել** ցած: **Հուսահատ** կաղնին օգնություն խնդրեց հարևան ծառերից, բայց **իզուր**:

*Հուսաբեկ, խենթ, ապարդյուն, հեփզհեփե, մրրիկ, ճռնչյուն, սասփկանալ, ընդդիմանալ, սպառվել, ըմբոստանալ, զահավիժել, երերալ, ուշ:*

**14. Դիտի՛ր տրված գեղանկարը և գրի՛ր նկարագրական շարադրություն՝ գործածելով հոմանիշներ: Վերնագրի՛ր:**




Հեղինակ՝ Միեր Աբեղյան, Լուսաբաց

15. **Սյունակներից ընտրի՛ր հականիշները և գրի՛ր դեմ դիմաց և դրանցով կազմի՛ր շարադրություն:**

| | | | |
|---|---|---|---|
| ա) իսկական | արդար | բ) հնարովի | ամբարտավան |
| շինծու | բնական | խոնարհ | թերի |
| վեհանձն | կեղծ | երկչոտ | թյուր |
| կայուն | անհաստատ | կատարյալ | կտրիճ |
| խարդախ | տմարդի | ճիշտ | իրական |

16. **Գրի՛ր տրված բառերի այնպիսի հականիշներ, որոնք ունեն՝**

| | | | |
|---|---|---|---|
| **ա) *գ, կ* կամ *ք*** | **բ) *դ, տ* կամ *թ*** | **գ) *ղ* կամ *խ*** | **դ) *ր* կամ *ռ*** |
| մեծահոգի | խորդուբորդ | պայծառ | ավագ |
| թուլացնել | դանդաղել | հաստատել | խաղաղվել |
| ի վնաս | շարունակել | կարծր | լավատես |
| կեղտոտ | ծեր | պարտվել | երախտագետ |

17. **Գրի՛ր տրված բառերի տարարմատ հականիշները և դրանցից ընտրելով՝ կազմի՛ր շարադրանք:**

| | **Հականիշներ** | **Տարարմատ հականիշներ** |
|---|---|---|
| ա) | ժլատ, կայուն, ժրաջան, նպաստել, տեղատվություն, խարդախ: | |
| բ) | աղոտ, վախճան, պարտություն, անաչառ, ավերել, միշտ | |
| գ) | հանգցնել, պիղծ, կասկածել, խինդ, վաղանցիկ, քրքջալ | |

**18. Գրի՛ր տրված բառերի նույնարմատ հականիշները և դրանցով կազմի՛ր շարադրություն:**

| հ | Տարարմատ հականիշներ | Նույնարմատ հականիշներ |
|---|---|---|
| ա) | անլույս, անբախտ, անօգուտ, անհամբեր, չկամ, անգույն, անպետք | |
| | անզարդ, անգութ, անշերտ, տհաճ, անդեմ, անշեշտ, անհնար, անվեհեր | |
| բ) | անխելք, անմորուք(ս),անամպ, անհոտ, անհամ, անվտանգ | |

**19. Նախադասությունների ընդգծված բառե՛րը փոխարինիր հականիշներով:**

ա) Հովհաննես Աբելյանի դերասանի խաղը *բնական* էր ու *համոզիչ:*

բ) Երեխաները ծառից *խոշոր* ու *քաղցր* սալոր էին քաղել և դրել սեղանին:

գ) *Մայրամուտին խաղաղ* ծովը հանկարծ *ալեկոծվեց*:

դ) Գյուղի *սակավամարդ* փողոցներից մեկով *հուզված* ու *արագ* անցնում էր մի երիտասարդ:

ե) *Արևամուտի վերջին* շողերը կարծես *հրաժեշտ էին տալիս* լեռների ձյունածածկ գագաթներին:

զ) *Դանդաղ* քայլերով դեպի *փերևազուրկ* ծառն էր գալիս մի *ալեհեր ծերունի*:

է) *Դառն* է *օտարի* հացը, և *դժվար* է բարձրանալ *օտար* սանդուղքներով:

ը) *Չարագույժ* լուրը *խռովեց* մարդկանց *անդորր* հոգիները և տխրությունը պատեղ բոլորին:

թ) Աղջիկը *վատ* տպավորություն թողեց իր *շատախոսությամբ* ու *արհամարհական* վերաբերմունքով:

ժ) Հրամանատարին թվաց, թե սուրհանդակը գալիս է իր զորքերի *հաղթանակի* լուրն *ավետելու*:

**20. Տրված բառակապակցությունների ընդհանուր բաղադրիչը փոխարինի՛ր հականիշներով:**

ա) փափուկ սիրտ, փափուկ բազմոց, փափուկ բարձ, փափուկ կյանք, փափուկ անձնավորություն / խոսք,

բ) պարզ առաջադրանք, պարզ նախադասություն, պարզ երկինք, պարզ մարդ, պարզ հագնվել,

գ) մռայլ երկինք, մռայլ գույներ, մռայլ անձնավորություն, մռայլ օր:

**21. Տրված ասացվածքների մեջ լրացրո՛ւ հականիշ բառերը և որևէ ասացվածք վերնագիր ընտրելով՝ գրի՛ր շարադրություն:**

**ա)** Առյուծն առյուծ է՝ էգ լինի թե .........:

Սպիտակ փողը ......... օրվա համար է:

Թանկից ......... չկա:

Խոսքը մեծին, ջուրը՝ .........:

Թոկի երկարն է լավ, խոսքի՝ .........:

Փորձված թանը ......... մածունից լավ է:

**բ)** Լացն ու ......... եղբայրներ են:

......... հացի կարոտ է, հարուստը՝ ամեն բանի:

......... ոսկի է, խոսելը՝ արծաթ:

Շատ մի՛ սիրիր, ......... կա, շատ մի՛ ........., սիրել կա:

Ասելը հեշտ է, անելը՝ .........:
Շուրթերիդ մեջ պահած բառը քո ստրուկն է, արտասանածը՝ քո .........:

**22. Տրված ասույթների մեջ լրացրո՛ւ հականիշ բառեր:**

1. Եթե մեկ անգամ ափսոսում ես, որ չես խոսել, ապա հարյուր անգամ ափսոսում ես, որ չես ........................: (Լ. Տոլստոյ)

2. Կարճ խելքը ........................ լեզու ունի: (Արիստոֆանես)

3. Ավելի լավ է ........................ կանգնած, քան ապրել ծնկաչոք: (Դ. Իբարուրի)

4. Մեկ թշնամին շատ է, հազար ...............................՝ քիչ: (Ռուդաքի)

5. Թույլը չի կարող ներել. ներելը ................................... հատկանիշ է: (Մ.Գանդի)

**23. Տրված նկարին վերաբերող շարադրա՛նք գրիր: Դրանցում հականիշ բառերի զույգե՛ր գործածիր:**

Հղում՝ ttps://www.google.com/search?q=:



**24. Գրի՛ր տրված համանունների իմաստները և դրանք գործածի՛ր նախադասություններ մեջ:**

ա) տարեկան-տարեկան ա) մեկնել-մեկնել

բ) անարգել-անարգել բ) վարել վարել

գ) փոկ-փոկ գ) տալ-տալ

**25. Ո՞ր բառերը համանուն ունեն: Գրի՛ր համանունական զույգերի իմաստները և դրանք գործածի՛ր նախադասություններում.**

ա) բերան, բ) մատ, գ) քիթ, դ) ականջ, ե) մարտ զ) փող:

**26. Բացատրի՛ր տրված բառաքերականական համանունները:**

Նմուշ՝ որոշում (վճիռ) – որոշում (որոշել բայի անկատարը)

Աղաց-աղաց, խնամի-խնամի, վայրի-վայրի, զեկուցում-զեկուցում, իր-իր, մկան-մկան, փնթփնթան-փնթփնթան, անվանի-անվանի:

**27. Բառային և բառաքերականական համանուննե՛րը գրիր համապատասխան սյունակներում և բացատրի՛ր:**

Խաղային-խաղային, անել-անել, հաչան-հաչան, շրջել-շրջել, հոր-հոր, աղի-աղի, թվային-թվային, շահում-շահում:

| Բառային համանուններ | Բառաքերականական համանուններ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**28. Շեղ գրվածների համանուն բառերը կամ բառաձևերը գործածի՛ր նախադասությունների մեջ:**

ա) Արեգը տետրում *ծով* էր նկարում:
բ) Այդ լուրը լսելով՝ ես *ավելի* հուզվեցի:
գ) Մեծ եղբայրս ինձ *մափաղի* մսով հյուրասիրեց:
դ) Արինեն *խաղում* էր փոքր եղբոր հետ:
ե) Լեոն լուռ ինձ *մեկնեց* գիրքը:
զ) Անտառում սկսեց *վայել* չարագուշակ քամին:

**29. Լրացրո՛ւ աղյուսակը՝ առանձնացնելով բառային և քերականական համանունները և դրանցից մի քանի զույգ գործածի՛ր շարադրանքում:**

Կիսել-կիսել, սեր-սեր, տարեկան-տարեկան, անարգել-անարգել, ճաշի-ճաշի, նետեր-նետեր, մատաղ-մատաղ, փող-փող, ափ-ափ, կարդա-կարդա, տան-տան, սուր-սուր, մատ-մատ, անցավ-անցավ:

| Բառային համանուններ | Քերականական համանուններ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**30. Գրի՛ր հետևյալ բառերի հարանունները և դրանցից մի քանի զույգ գործածի՛ր նախադասությունների մեջ:**

Հրատարակչություն, ափ, սպրդել, ցեղական, սեզ, հրատարակել, հանցանք, պատրաստակամություն, ավանդույթ, ցուցում, հրավեր, ծաղկել, կռունկ, խոստանալ, ավանդություն, ցեղային:

**31. Հաղորդո՛ւմ պատրաստիր հայկական ավանդույթների և սովորույթների մասին:**

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

**32. Արտագրի՛ր, գտի՛ր բառագործածության սխալները և համապատասխան հարանուննե՛ր տեղադրիր նախադասություններում:**

ա) Աշխատակիցները ոգևորվել էին մանկական «Ուրախ գնացք» հանդեսի հրատարակչության համար:

բ) Գյուղացին փորձում է պահպանել իր իրավունքը:

գ) Տնօրենը բարձր է գնահատում ուսուցիչների՝ տարիների աշխատանքով ձեռք բերած փորձությունը:

դ) Լրագրողն այդ իրադարձության մասին հետաքրքրական փաստեր է հրատարակել:

ե) Նկարչուհու կտավներից երևում է, որ նա գույնի լավ զգացում ունի:

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

**1. Տրված բառերը խմբավորի՛ր ըստ գործուն և ոչ գործուն բառաշերտերի:**

Սեղան, աթոռ, անոթազարկագրիչ, կամուրջ, բաբան, մարդ, կին, բույր, սառցատեղախախտում, դրսեկ, ուտել, խմել, բնել, կապարճ, նիզակ, սակր, ջերմամանրէագերծում, ճանապարհ, հեռուստատեսություն, գահավորակ, լույս, ավագազտիչ, ծով, լիճ, հաց, տուն, գիշեր, հագուստ, հողմապտուտաչափ, պահեստ, ածխածնազերծում, եղբայր, տեգ. աշտե, համաբանություն, ներերակային, տապար, ընկեր, խաղաղություն, հատապտղաբույծ, ցերեկ, մոխրաջրազատիչ:

| Գործուն բառաշերտեր | Ոչ գործուն բառաշերտեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**2. Ընդգծի՛ր ճիշտ տարբերակները:**
**Հայերենի բառապաշարը բաղկացած է հետևյալ շերտերից՝**

ա) ընդհանուր հայերեն բառեր,
բ) մարդկային բառեր
գ) գրաբարյան բառեր,
դ) միջինհայերենյան բառեր,

ե) աշխարհաբարյան բառեր,
զ) արևմտահայերեն բառեր,
է) ժողովրդախոսակցական բառեր,
ը) բարբառային բառեր,
թ) հեքիաթային բառեր

**3. Ներկայացրո՛ւ՝ որոնք են հայերենի բառապաշարի շերտերն ըստ ծագման:**

**4. Կազմի՛ր ընդհանուր հայերեն բառերի ցանկ:**

| Շրջակա աշխարհը ներկայացնող բառեր | Հատկանիշ ցույց տվող բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**5. Գտի՛ր տեքստի հնաբանությունները, որոշի՛ր դրանց տեսակները:**

Սենյակը, որտեղ նստած էր Սամվելը, ներկայացնում էր նրա ընդունարանը: Հատակը պատած էր նախշուն, բրդեղեն օթոցներով. անկյուններում դրած էին՝ զանազան ձևով, ծանր և թեթև նիզակներ, տեգեր, գեղարդներ, ջիդաներ, աշտեներ և երկաթյե ահագին լախտեր, բոլորը գեղեցիկ քանդակներով զարդարած, բոլորը ոսկեհուռ դրվագներով ագուցած: Իսկ սենյակի այն ճակատի վրա, որ կողմը դրած էր նրա գահավորակը, պատի վրա մեխած էր մի լայն վագրի մորթի: Այդ գազանին նա ինքն էր սպանել որսորդության ժամանակ, երբ դեռ տասնևութ տարեկան էր: Նրա վրայից քարշ էին ընկած զանազան զենքեր, կապարճ՝ լի նետերով, աղեղ՝ լայնալիճ, տապարներ՝ երկաթյա երկար կոթով, թեթև վահան՝ ուղտի թափանցիկ կաշուց պատրաստված, ծանր ասպար՝ պողպատից շինված և խոշոր կոճակների նման բևեռներով գամված, սաղավարտներ՝ կամ տեգի պես սուր կատարներով և կամ մազե ցցունքներով, զրահ՝ երկաթյա մանր օղակներից գործված, պղնձյա հաստ լանջապան, որի մեջտեղում բարձրաքանդակ դիրքով դուրս էր նայում մի գալարված վիշապ, զանազան թրեր, դաշույններ, վաղրներ՝ երկար և կարճ, ուղիղ և կեռ, միասայրի և երկսայրի, որոնց պատյանները պատած էին ոսկով ու արծաթով, որոնց կոթերը զարդարած էին ականակուռ գոհարներով, և որոնցից շատերը երկաթահատ էին ու դեղած: Հագած ուներ կաշյա նեղ վարտիքը, որի սրունքների վրա ամրացրած էր նույնպես կաշյա զանկապաններ: Ոտներին հագած ուներ մազե թանձր տրեխներ, նույնպես մազե տակերով: Գլխին դրած ուներ թաղիքյա բոլորակ գլխարկ, որի վրայի կերպասյա փաթոթի ծայրերը ծածկում էին մերկ պարանոցը և ծածանվում էին լայն թիկունքի վրա:

*Ըստ Րաֆֆու «Սամվել» վեպի*

| Պատմաբառեր | Հնաբառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**5. Նախորդ վարժության հնաբանություններով նախադասություննե՛ր կազմիր:**

**7. Որոշի՛ր՝ տրված բառազույգերից որոնք են գրաբարից աշխարհաբարին անցածները: Հիմնավորի՛ր ընտրությունդ:**

ա) զղջալ-փոշմանել,
բ) ավազ-երեց,
գ) գավիթ-բակ,
դ) երեկո-իրիկուն,
ե) Հուղարկավորել-թաղել,
զ) ապրե՛ս-կեցցե՛ս:

**8. Գրաբարյան ծագում ունեցող հետևյալ բառերի դիմաց մեկական հոմանի՛շ գրիր:**

Ըմպանակ, բաղդատել, հանապազորդ, ելուզակ, ըմբոշխնել, հանապազօրյա, հանիրավի, քանզի, իրավ, թյուր, ընձյուղ, հռետոր, բավիղ, գեղմ, գավիթ, տիկ:

| Գրաբարյան բառը | Հոմանիշը |
|---|---|
| | |
| | |

| | |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

**9. Տրված գրաբարյան արմատներով բառե՛ր կազմիր և դրանք գործածի՛ր շարադրության մեջ:**

Քնին, դուլ, մէտ (մետ), կառափն, անդրի, ազն, խայտ, խոյզ (խույզ):

**10. Գտի՛ր նորաբանությունները և որոշի՛ր, թե դրանք ինչ խոսքի մասի են պատկանում:**

Ինքնախաբեություն, օտարաբանություն, տիեզերակայան, աստղադիտարան, դիակիզարան, ճանապարհ, երկնաքեր, լողասառույց, ժողովրդահաճո, դասագիրք, ինքնախտազերծում, լճափ, բացախոսություն, լեզվաքաղաքականություն, խնդրահարույց, զբոսայգի, հայրենազրկում, գրասեղան, լրավճարել, բարձրահարկ, կանգառ, նյութաշահադիտական, անտառային, հրաժարվել, խուճապահարույց:

**11. Գրի՛ր միջինհայերենյան ծագում ունեցող հետևյալ բառերի հոմանիշներ.**

շոր, չքեր, հիմա, դատաստանագիրք, թոկ, խև, շվաք, պարոն, դունչ, գաթա, թոկ, խլեզ, խև, կանթ, կոթ, հենց, հիմա, ճմուռ, մշուշ, դարուփոս, մշուշ, շվաք, բազուկ, փեշ, յար:

**12. Գրի՛ր թավ գրված միջինհայերենյան բառերի արևելահայերեն իմաստները:**

ա) Որքա՞ն ***քակեն*** եկեղեցի,
Քանի՞ ***շինեն*** պիղծ ***մզկիթնի***.
Որքա՞ն տանջեն ***զմեզ յաշխարհի***,
Եւ կեղեքեն ***զկեանս*** մեր ***յայփնի***…

բ) ***Հիմիկ դըժարեց բաներս***,
Որ թաթարն եղաւ թագաւոր,
***Ձըրկեց զամենայն*** աշխարհս,
Ու գողերն ***եղիր մեծավոր***:

**13. Քեզ որտեղի՞ց է ծանոթ «դատաստանագիրք» բառը: Տեղեկություննե՛ր հավաքիր և փոքրիկ հաղորդո՛ւմ պատրաստիր:**

**14. Հայերեն ի՞նչ դիմելաձևեր գիտես: Փոքրիկ ցա՛նկ պատրաստիր: Ի՞նչ կարող ես ասել այդ բառերի ծագման մասին:**

**15. Գտի՛ր և դեմ դիմաց գրի՛ր արևելահայերեն և արևմտահայերեն համարժեք բառերը:**

Պլլվիլ, կոփամարտ, աղեկ, ատոմ, բռնցքամարտ, հոն, մանչ, հոս, լրանալ, տանկ, աղվոր, ճատրակ, տղա, նավթ, լավ, անանկ, փակ, քարյուղ,այնտեղ, ամսական, ժամանակ, ատամ, լմննալ, քակել, այնպես/այնպիսի, ատեն, աշխատավարձ, հյուլե, հրասայլ, ամուսին, ակռա, գոց, փաթաթվել, քանդել, շախմատ, էրիկ, այստեղ, գեղեցիկ:

**16. Արտագրի՛ր տրված հատվածն՝ ժողովրդախոսակցական բառերը, դարձվածք-ները և բառաձևերը փոխարինելով գրական համարժեքներով:**

Էդ իրիկուն բորբոքվել էր Նորոյի երևակայությունը, ու թվում էր՝ մի քիչ էլ խելքին տա, մի ճար կգտնի:

- Էսօր ի՞նչ մի զոռ բան է օդի մեջ կարկուտը ջուր դարձնելը: Ախպե՛ր, էն ճագագայթ-ներից բաց թողեք օդի մեջ, կարկուտը հալի, գնա: Այ թե կգրեր ուր որ պետքն է, թե՝ ա՛յ մարդիկ, ես՝ սարի չոբան, էսքան բան մտածեցի, կարկուտը անձրև դարձնելու ճարը էսպես ու էսպես գտա, բա էսքան ժամանակ դուք ի՞նչ եք անում: Վա՜յ, էս ի՞նչ է արել անիծյալ կարկուտը: Ծառ ու վազի վրա ճյուղ ու պտուղ չի թողել, ջարդել բերել է ցած, ծեփել գետնին: Ծեգին աշխատողները կգան, կնստեն այգիների մոտ ու սրտները չի բռնի, որ գործի կպնեն:

**17. Հատվածից դո՛ւրս գրիր ժողովրդախոսակցական և օտար ծագման բառերը կամ դարձվածքները և գրի՛ր դրանց գրական համարժեքները:**

Հաճի աղան երկար նայում էր իր որդու թաղիքե վալիկներին, նրա տափակ փափախին և կարմիր շարֆին. մերթ երևում, մերթ կորչում էր զինվորների բազմության մեջ, մինչև որ անհետացավ:

Հաճի աղան դուրս եկավ խանութից և բռնեց տան ճամփան:

Հասնելով տուն՝ դռան մոտ ոտները չքսեց երկաթե քերիչին, ինչպես անխախտելի պարտականությունն էր Հաճիենց տանեցիների, և ներս մտավ: Իր մեծ հարսը, որ տան միջանցքում բուրդ էր ձաղկում, Հաճուն տեսնելով՝ տիրացուի վարժությամբ, իբրև ծիսակատարության որոշ տեղը, ձայն տվեց.

- Շողո՛, Հաճի աղաս էկավ, ղայֆան բեր:

Բայց երբ Հաճի աղան մրթմրթաց, «Հարամ ըլի ղայֆան»՝ հարսին այնպես թվաց, թե երազումն է կամ մի անասելի դժբախտություն եկավ իրենց տան գլխին: Վրա ընկավ Հաճու ոտներին, հանեց նրա կաշվե կալոշները և, տեսնելով Հաճու շալվարի ցեխոտված տոտերը, վախեցած գնաց խոհանոց՝ տանեցոց իմաց տալու:

Հաճի աղան մտավ «մեծ օդան» և կանգնեց մեջտեղը տխուր՝ արձանի պես:

Ներս մտավ Հաճի աղայի կինը, Հաճի մարը, մի ժիր ու նիհար կին:

- Ի՞նչ է, Հաճի աղա, - հարցրեց:

- Ի՞նչ պիտի ըլի. թուրքը գուքա, հազրվեցեք:

- Օ՜ֆ, ամա՜ն, Հաճի աղա, «թուրք, թուրք» առել անցել ես, քաղաքը լիքը սալդաթ է:

- Գլխեդ շատ մի դուրս տա, հազրվե՛,- հրահանգեց Հաճի աղան:

- Թուրք չկա, չկա. ղայֆադ խմե, - արագախոսեց ժիր կինը և դուրս գնաց:

Այդ միջոցին Հաճի աղայի թոռը՝ Շողոն, մի կարմրաթուշ աղջիկ, դռուզ ձեռներով ներս բերեց կաթով սուրճը:

*Ըստ Դ. Դեմիրճյանի*

**18. Տրված բառաշարի՛ց առանձնացրու նորաբանությունները:**

Երկխոսություն, ընտրախախտում, օդանավ, համակարգ, էլեկտրակայան, շոգենավ, բրիչ, կրիչ, սրիչ, խտասկավառակ, հետախույզ, հարցախույզ, շրջապատ, ռադիոընդունիչ, կայք, սառնարան, հեռուստացույց, կարծրատիպ, վարկանիշ, ընտրակեղծիք, հարցազրույց, ծովահեն, կրիչ, համացանց, խոսնակ, ընկարգել:

**19. Գրի՛ր տրված ժողովրդախոսակցական բառերի գրական հոմանիշները և դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

Խալի, չուխա, պռոշ, թուշ, պաչել, չաղ, չոքել, ճղել, խուփ, նամ, բոստան, խակ, սղղալ:

**20. Նախադասությունների մեջ գտի՛ր տրված օտար բառերի հայերեն համարժեքները (նորաբանությունները):**

Օնլայն, դեկուպաժ, գրաֆիկ, ֆայլ, մարքետոլոգ, ավտորիտար, ինտերնետ, DVD, մարկետինգ, մենենջեր:

**21. Տրված բանաստեղծական տողերում գտի՛ր հեղինակային նորաբանությունները:**

Եվ հրամայեց հավերժատեսիլ արարողը մեծ.
– Քանի աշխարհում շուշանները կան և համր են քանի՝
Շուշանալեզուդ մի սև շշուկ էլ մահի ահ չունի:
Բայց խելքդ գլխիդ դու թա՛գ դարձրու՝ տիվ ու գիշերով,
Որ չփոշոտվի մայրենիդ օտար լեզվափշերով:
– Ալելուիա,– ձայնեց վայրենաթոթով այս մարդն էլ իսկույն,
Ոտքն ընկավ, իբր խնկեց աստղծուն:
Ու մեծախորհուրդն արևածաղկի լեզուն էլ առավ
Պատվաստեց բերանն ուրիշ մի համրի՝ իր լեզվածարավ,
Սակայն սա հենց որ նուրբ լեզվավորվեց՝ վեր նայեց խաբված,
Չընկավ անմարմին ոտքն արարողի, որ մթնեց ապշած:

*Բսփ Հովհաննես Շիրազի*

**22. Տրված տե՛քստը թարգմանիր հայերեն:**

## Career prospects

The type of work that people do is constantly changing as man develops and modifies his way of living. In fact, in only ten years major changes have been seen in the workforce in various sectors of economy. They reflect changes in technology and lifestyle. There is an evident increase of workforce in the service sector which includes the retail trade, tourist-related services such as hotels as well as transport, communications, finance, property, research and development, education and health care connected with it. The largest developments were seen in the new information and communication technologies, which have grown rapidly since 1990. The developments in ICTs1 have had a huge influence on jobs in all sectors, as computer technology has greatly affected the way in which work is done. The means of production, distribution and communication have all been transformed in a very short time. It is considered that one in twenty new jobs will be in ICTs in the future. Economists predict that these tendencies will continue. Fewer people will be employed in industry and agriculture. Nearly all researchers agree that there will be a great breakthrough in medicine.

Due to the market becoming worldwide, companies in various industries have to upgrade their products and use technology and skillfully prepared workforce in order to face increased competition.